# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

<<ՇՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/5>> ծածկագրով գնման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

գ.Ախուրյան <<26>> <<փետրվարի>> 2020թ.

ժամը 14:00

Գնահատող հանձնաժողով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լիպարիտ Տիգրանյանը

Անդամներ՝ Ռուբիկ Քաբաբյանը

Արա Ղանդիլյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Անահիտ Ցավրումյանը

<<ՇՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/5>> ծածկագրով գնման հայտերի բացման նիստը կայացավ ՀՀ Շիրակի մարզ, գ.Ախուրյան,Գյումրու խճուղի 42 հասցեում գտնվող Ախուրյանի համայնքապետարանի շենքի երկրորդ հարկի N11 սենյակում:Գնման առարկա է հանդիսանում Ախուրյանի համայնքապետարանի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունները,որը կազմակերպվել է 2 չափաբաժիններով:

| *Չափաբաժին ների համարները* | *Չափաբաժնի անվանումը* |
|---|---|
| 1 | ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Արևիկ բնակավայրի երաժշտական դպրոցի և վարչական կենտրոնի շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում: |
| 2 | Ախուրյան համայնքի Շուշան, Լեոյի անվան , Բասեն , Հեքիաթ մանկապարտեզների, Հովիտ բնակավայրի հասարակական նշանակության և վարչական կենտրոնի, Կառնուտ բնակավայրի հասարակական շենքի և հանգստի սենյակի կառույցների անվտանգության տեխնիկական համակարգերի անցկացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում: |

2. Ընդունել ի գիտություն, որ հայտ է ներկայացրել մեկ մասնակից,որը ներկայացրել է գնային առաջարկ 1 չափաբաժնի համար.

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը | էլ.փոստ |
|---|---|---|---|
| 1. | «Վանարխ»ՍՊԸ | ՀՀ, Լոռու մարզ,ք.Վանաձոր,Վարդանանց 19-1 | vanarkh@mail..ru |

3. *Մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմված է գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:*

4. *Տվյալներ պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.*

*- Մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը առկա են: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և մեկ օրինակ պատճենից:*

*5.«Վանարխ»ՍՊԸ –ի ներկայացրած գնային առաջարկը ՝*

| Չափաբաժնի համարը | Գնման առարկան | Կազմակերպության անվանումը | Գնային առաջարկը /առանց ԱԱՀ/ /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Արևիկ բնակավայրի երաժշտական դպրոցի և վարչական կենտրոնի շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում | «Վանարխ»ՍՊԸ | 350000 | 350000 |

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. **ՇՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/5»** ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Վանարխ»ՍՊԸ-ն ճանաչվեց ընտրված մասնակից նախահաշվային գնից ոչ բարձր գին առաջարկած մասնակից,իսկ 2-րդ չափաբաժնի մասով գնումը կհայտարարվի չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝

**Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝**

1) հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը գնումների էլեկտրոնային տեղեկատուում հարապարակելուց հետո ընտրված մասնակցի հետ կկնքվի ծառայությունների կատարման պայմանագիր/անգործության ժամկետ չի սահմանվում/: Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պահանջի հիման վրա, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումներ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի նախագահ՝ ________ Լիպարիտ Տիգրանյան

Անդամներ՝ ________ Ռուբիկ Քաբարյան

________ Արա Ղանդիլյան

Քարտուղար՝ ________ Անահիտ Ցավրումյան